բաւային փեշերին, սկսած Նուխիից մինչեւ Շամախի ու Բաղու։

Ասածներից հետեւում է, ասում է Մարքվարտ, որ ներկայիս իսկ բոլորովին չէ մեռած աղուան ժողովուրդը։ Գանձակից մինչեւ Շուշի այսօր էլ զանդուածօրէն ապրող հայերը եւ Կուրի այն կողմը ապրող հայացած աղուանները մի ամբողջութիւն են կազմում, թէեւ թաթարական (Կուրի երկայնքով) լայն սեպով բաժանուած իրարից։

«Աւելի յարմար կը լինէր՝ այդ երկիրը Աղուան եւ Հայաստան անուանել,— ասում է Մ.,— Նրանք են այդ երկրի իրաւական տէրերը։ Իսկ թաթարները, անքաղաքակիրթ եւ կրթութեան անընդունակ այդ տարրը, ընդհակառակը, յետադային են ներս խուժած։ Թաթարները հայերի եւ աղուանից վերաբերմամբ նոյն սեպի դերն են խաղում, ինչ որ կէս-թուրք մահմեդականները՝ հիւսիսի եւ հարաւի սլաւոնների վերաբերմամբ։ Մարդկութեան եւ մշակոյթի այդ երկու թշնամիներին, որոնց բռնի տիրապետութիւնը յուսանք որ վերջնապէս խորտակուած է, բոլորովին կղզիացնելու պարտականութիւնն ունի պատմութիւնը։ Միւս կողմից՝ վերականգնել պէտք է հայոց եւ աղուանից մէջ եղած պատմական հին կամուրջները,— լինի դա ներդաղթի թէ ասիճանական թափանցումի միջոցով»։

* * *

Իր աշխատութեան հետազօտական մասը այսպէս է ամփոփում յարգելի գիտնականը.—

«Հին Հայաստանը մենք պէտք է երեք մասի բաժանենք. 1. Փոքր Հայք կամ նախնական Հայաստան. 2. Արեւմտեան Հայաստան՝ մէջը հաշուելով Տարօնը. 3. Արեւելեան կամ Նոր Հայաստան՝ Երասխի հովիտը մէջը։ Միջին դարում այդ վերջինին աւելացաւ նաեւ հայկական Աղուանքը։ Յետադային հայ ժողովրդի բնակութեան 4-րդ կեդրոն եւս ստեղծուեց։ Դա Կիլիկիան էր»։

(Վերջը յաջորդով)

ԱՊՐՈՒՄՆԵՐ

Գրեց՝ ՄԱԼԽԱՍ

Հազիւ վանքի սահմանէն դուրս եկած էինք, արդէն մթնեց։ Բաց դաշտն էր առջեւնիս, երկու կողմէն եղերուած լեռներով։ Առանց բեռի՝ աշխոյժ ձիերուն գլուխը բաց ձգեցինք, լոյսը չի բացուած տեղ հասնելու ցանկութեամբ։

Մեր Սպարտացի Յակոբը, արդէն լակոնական խօսակցութեան սիրահար, այդ գիշեր բերանը չբացաւ։ Քիչ մը ցուրտ էր։ Ես ալ, լաւ փաթթուած Փայլակի սիրերիական մուշտակին մէջ, կէս քնատ կը հետեւէի անոր։

Երկու ժամ ճամբայ կտրած էինք արդէն, երբ ձերմակ սարը մեր ձախ թեւին երեւցաւ։ Գեատուկի կէս ճամբին էինք. ամէն ինչ լաւ կ'երթար։ Ձերմակ սարի մօտ, չեմ գիտեր, ի՞նչ մտաւ մէջս. Յակոբին ըսի, որ ինքը ինծի հետեւի, ես վալատութիւն պիտի ընեմ, ու առաջ անցայ։ Երանի՜, այդ խմաստուն քայլը չառնէի։

Մութ գիշեր էր. ճամբայ ըսուածը նախիրի ճամբայ մըն է, երբեմն բարակ թելի նման երկարող, երբեմն ալ ինքնիրեն կը բազմապատկուի. հոս ալ ճամբայ, վարն ալ ճամբայ, վերն ալ ճամբայ, չորս կողմդ ճամբայ, եւ սակայն իրական ճամբայ մը չկայ մէջտեղ։

Խաւար գիշերին մէջ այդ արահետները դունաթափ մոխիրի շերտերու կը նմանին. աչքերդ լարելու ես՝ բան մը տեսնելու համար։ Թէեւ շատ անգամ բան ալ չկայ, որ տեսնես։ Սուղուող գետերու նման՝ ճամբայ ըսուածն ալ կ'անհետի, բաւական մը վերջը նորէն աչքի զարնելու համար։

Ի հարկէ, մեծապէս կ'օգնեն սարերը իրենց ձեւերով, խաւարի մէջ նշմարուող իրենց գիկ-